

# ԼՍԱՐԱՆ ԿԵՆՅԱՂՕԳՈՒՏ ԳԻՏԵԼԵԱՅ.

## Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ա Ս Տ Ո Ւ Ա Ծ Ա Շ Ո Ւ Ն Չ Ս Ո Ւ Ր Բ Գ Ր Ո Յ .

Գ Ա Ս ԺԸ.

Երիբով ու Գայի քաղաքները այնպէս յաջող կերպով առնելէն ետեւ, կրցաւ Յեսու ժողովրդեան ալ հասկըցնել թէ Աստուած իրենց հետն է, եւ մնացած ամուր ամուր քաղաքներն ալ, անոնց զօրաւոր բնակիչներն ալ իրենց ձեռքը պիտի մատնէ: Ուստի *Գերադ* անունով լեռան վրայ սեղան մը կանգնեց, կիրով (*firkân*) ձերմըկցուց, չորս կողմը Աստուծոյ գլխաւոր պատուիրաններն ու օրէնքները գրեց, վրան շնորհակալութեան զոհեր մատոյց Աստուծոյ, տապաւնակն ալ մեծ հանդիսով այն տեղը բերաւ. խօսք առաւ անոնցմէ որ այն օրէնքները ամենայն հաւատարմութեամբ պահեն. յետոյ երկու բաժնեց ժողովուրդը. կէսը կեցուց նոյն Գերադ լեռան վրայ, կէսն ալ անոր դիմացը *Գարիզին* լեռան վրայ: Աւետացիներն սկսան բարձր ձայնով կարգաւ մէկիկ մէկիկ օրէնքները, ու ամէն մէկուն ետեւէն ըսել. «Անիծեա՛լ լինի այն մարդն որ այս օրէնքին դէմ գործէ»: Ժողովուրդն ալ պատասխան կուտար ամէն մէկուն թէ *Ամեն*:— Այս *ամեն* բառը Հրէից լեզուովն է, եւ կնշանակէ *եղիցի*, այսինքն այնպէս լինի:— Յետոյ կարդացուեցան այն օրհներգներն ալ որ Մովսէս դրբեր էր Աստուծոյ օրէնքները պահողներուն համար: Բայց լսելու բան են այն անէծքներն որ Մովսէս դրաւ՝ պատուիրանքները չպահողներուն, եւ ընդհանրապէս բոլոր Հրէից ազգին վրայ՝ թէ որ ապերախտ գտնուի Աստուծոյ դէմ: Օրինակի համար այն սարսափելի խօսքերուն մէկ քանին յիշատակեմք այս տեղ: «Թէ որ Աստուծոյ քեզի տուած օրէնքները ոտքի տակ առնուս, կըսէ, այս քու վրադ դրած անէծքներուս հասնիս. այսինքն երկիրքը գլխուդ վրայ պղինձ դառնայ, երկիրս ոտքիդ տակը երկամ: Անձրեւի տեղ հող ու մոխիր տայ քեզի Աստուած, ու վերէն աւազ ու փռշի թափէ գլուխդ: Թշնամիներուդ առջեւը յաղթուիս ու խայտառակուիս. մէկ ճամբով եւ

նես նոցա վրայ ու եօթը ճամբով փախչիս անոնց առջեւէն. աշխարհիս ամէն տէրութիւններուն մէջ ցիրուցան լինիս: Եգիպտացոց բորոտութիւնը քու վրադ ալ գայ, ու չկրնաս բժշկութիւն գրտնել: Այն կերպով Աստուած խելքդ առնու գլխեդ ու աչքդ կուրցնէ որ ցորեկ ատեն՝ խաւարի մէջ խարխափելով քալող կուրի մը պէս մոլորուած պտըտիս: Տուն շինես, մէջը նստիլ չկարենաս: Մանչ ու աղջիկ զաւակներդ օտար ագգի ձեռք մատնուին. վրաները նայելով հալին աչուրներդ, ու ձեռքէդ բան մը չգայ որ կարենաս ընել անոնց: Քու երկրիդ բերքերն ու բոլոր քու աշխատանքդ այնպիսի ազգ մը ուտէ հատցնէ որ դուն ոչ գիտես եւ ոչ կճանչնաս: Դրսէն եկող՝ քու երկիրդ բնակողը քանի երթայ վեր բարձրանայ, ու դուն քանի երթաս՝ վար իջնաս. — եկն որ իքեզ իցէ՝ ելցէ քան զքեզ վեր ի վեր, եւ դու իջցես վայր ի վայր. — նա լինի քեզ փոխ տուողը, եւ դու լինիս փոխ առնողը: Զաւակներուդ մէջ անպակաս լինին ցուցանաւորներն ու պակասաւորները: Աստուած քեզի այնպիսի ազգ մը ղրկէ որ աշխարհիս մէկ ծայրէն արծիւի պէս գայ հասնի վրադ, ազգ մը՝ որոյ ոչ լեզուն հասկնաս, ոչ երեսին ժամտութեանը դիմանաս. նա ոչ քու ծերերէդ պատկառի, ոչ տղոցդ ողորմի. քու ոչխարներդ ու ցորեններդ նա՛ ուտէ, քու գինիներդ նա խմէ, մինչեւ որ հոգիդ քաղէ ու փճացնէ զքեզ: Ամուր ամուր քաղաքներուդ մէջ այնպէս պաշարէ զքեզ որ քաղցածութենէդ՝ Աստուծոյ քեզի տուած մանչ ու աղջիկ զաւակներուդ միսն ուտես. ոչ հայրը որդւոյն խնայէ, ոչ մայրը աղջկանը. մայրը մինչեւ իր զաւակը խորովէ եւ ուտէ. եւ դուք որ երկնքի աստղերուն պէս անթիւ անհամար պիտի լինէիք՝ խեղճ ու քիչոր ժողովուրդ մը դառնաք: Աշխարհիս մէկ ծայրէն մէկալը՝ ամէն ազգաց մէջ ցրուէ զքեզ Աստուած, եւ անոնց



մէջ ալ հանգստութիւն չտայ քեզի. միշտ եւ հանապազ սիրտդ կոտրած՝ աչքերդ ներս մտած՝ տրտում տխուր քալես, ու քու կեանքդ աչքիդ առջեւ կախուած կենայ: Գիշեր ու ցորեկ ահողողի մէջ լինիս, եւ քու ողջ լինելուդ դուն ալ չհաւատաս: Առաւօտն ըսես քեզի թէ արդեօք ե՞րբ իրիկուն պիտի լինի. իրիկունն ըսես թէ արդեօք ե՞րբ առաւօտ պիտի լինի. այսքա՛ն լինի ահա քու վախդ ու սարսափդ, եւ քու աչքերուդ երեւնալու սոսկալի տեսիլքներուն ահաւորութիւնը»: Հրէից ազգին պատմութիւնը քիչ շատ գիտցողը կտեսնէ որ այս անէծքներուն շատը կատարուեցան ու մինչեւ ցայսօր կկատարուին այն խեղճ ժողովրդեան վրայ. չգիտցողներն ալ հետ զհետէ պիտի լսեն իմանան: Բայց Աստուծոյ պատուիրանքները կամաւ եւ չարութեամբ ոտքի տակ առնող, եւ իւր խղճմտանքին աղաղակը կամաւորապէս չլսելու զարնող ո՛ր եւ իցէ մարդ ալ արդեօք այսպիսի անէծքներու նշաններ չը՞տեսներ ինք իր վրայ. . . Գամբ մեր պատմութեանը:

Յետուայ եւ նորա ժողովրդեան ըրածները լսելով՝ Քանանացւոց երկրին բոլոր բնակիչներն ալ մեծ սարսափի մէջ էին. բայց խօսք դրին իրենց մէջ որ միաբանին՝ յուսահատաբար դէմ ելնեն այն նորանշան ազգին, որ անխնայ դիմացն ելնողը կշարդէր, քաղաքները կկործանէր, գեղերը կայրէր, ամէն տեղ կտիրապետէր: Բայց նոցա ամենուն մէջ խեղացի գտնուեցան *Գաբաւուն* անունով մեծ քաղաքին բնակիչները: Սոքա տեսնելով որ Իսրայելացւոց դէմ դնելու ճար չունին, նոցա հպատակութիւն ցուցնելով ալ՝ մահուրնէ պիտի չազատին, մէջերնէն մէկ քանի լեզուանի մարդիկ ընտրեցին յուզարկեցին Յետուայ՝ ինչ ըսելիքնին ապսպրելով: Սոքա վրաները հին ու մին պատուած քուրձ (*խարար*) հագած, քանի մը հատ պատուած ու կարկրած՝ գինիի տիկեր (*քուրումներ*) առած, կօշիկներուն կաշիները բզրկտած, հողաթափները մաշած, ճամբու պաշարի համար առած հացերնին չորցած ու որդնոտած, ելան եկան՝ Յետուայ առջեւն ելան, ըսին թէ «Մեք հեռաւոր աշխարհքէ եկած մարդիկ եմք. եկէք մեզի հետ բարեկամութեան դաշինք դրէք»: Իսրայելացիք պատասխան տուին

անոնց թէ «Նայեցէք, մի՛ գուցէ մեզի մօտ բռնակող ժողովուրդներէն էք. եթէ այնպէս է, չեմ կրնար ձեզի հետ դաշնադրութիւն ընել»: Գաբաւունացիք գնացին Յետուայ ընկան, այնչափ լեզու թափեցին որ Յետու հաւատաց խօսքերուն, խորհուրդ ըրաւ ծերերուն հետ. նայեցան որ մարդիկներուն վրան գլուխը, որ բոլոր նոր են եղեր (ինչպէս որ կըսէին) հինցած մաշած պատուած, հացերը՝ որ տաք տաք հետերնին առեր են եղեր՝ չորցած ու որդնոտած, գինիներուն տիկերն որ նոր են եղեր՝ մաշած ու պատուած կարկրտուած, — հաւատացին նոցա խօսքին, ու առանց Աստուծոյ հարցնելու՝ բարեկամութեան ու նիզակակցութեան ուխտ ու դաշինք դրին հետերը:

Վրան երեք օր անցաւ, իմանան Իսրայելացիք որ այն Գաբաւունացիները իրենցմէ կէս օրուան կամ մէկ օրուան ճամբայ հեռու կընակին եղեր: Ժողովուրդը սկսաւ գանգտիլ Յետուայ ու իշխաններուն դէմ, եւ իրաւունք ունէր. բայց նոքա ալ չէին կրնար իրենց երդումը ետ առնու. ուստի որոշեցին որ Յետու լաւ մը երեսներուն զարնէ նոցա ըրած խարդախութիւնն ու անէծքով հանդերձ պարտք դնէ վրաներն որ ժողովրդեան ու Վկայութեան խորանին համար փայտ կոտրող ու ջուր կրող լինին իրենք այն ատենէն: Ասով թէ՛ ժողովրդեան սիրտը իջաւ, եւ թէ Գաբաւունացիք ազատեցան ջարդէ, եւ որդւոց որդի գերիի պէս ծառայեցին տաճարին ալ՝ մինչեւ Հրէից բոլոր աշխարհք ցրուիլը: Գաբաւունացիները Քանանու երկրին *Խեւացի* ըսուած ցեղէն էին: Զարմանալի ու ցաւալի է որ մեր *Խոյեցի* ըսուած Պարսկահայոց մէկ մասին վրայ ալ կտեսնուին մեր ժամանակը այն հին Խեւացւոց պակասութիւնները. . . .

Երուսաղէմ քաղաքը այն ատենները Յեբրեւացի ըսուած ցեղին ձեռքն էր: Սոցա Ադոնիբեզեկ անունով թագաւորը երբոր լսեց թէ Գաբաւունացիք անձնատուր եղեր են Յետուայ, իսկոյն մարդրկեց, իմաց տուաւ իրեն դրացի չորս թագաւորներու ալ, ու ամէնքը մէկէն Գաբաւունի վրայ ելան որ պատժեն անոր բնակիչները, ինչո՞ւ համար անձնատուր եղաք՝ Իսրայելացւոց դուք որ այդպիսի մեծ ու զօրաւոր քաղաք ունէիք՝ ըսե՛





« ԿԱՅՅԷ ԱՐԵԳԱԿՆ ՀԱՆԴԷՊ ԳԱՐԱՒՈՆԻ » :

լով: Գաբառնացիք շուտ մը մարդ ղրկեցին Յեսուայ ու աղաչեցին որ գայ օգնէ իրենց: Յեսուայ բոլոր զօրքը հետն առաւ ու գիշերով համբայ ելաւ. բոլոր գիշերը քալելով՝ առաւօտը հասաւ յանկարծ Ամովրիացւոց բանակին վրայ, եւ այնպիսի շփոթութիւն մը ձգեց այն հինգ Թագաւորաց զօրքերուն մէջ որ ոչ զինուորը յայտնի էր եւ ոչ զօրավարը. ուստի եւ սկսան ցրուցան եղած փախչիլ դէպ ի լեռներն ու ձորերը: Յեսուայ տեսաւ որ յաղթութիւնը անկատար պիտի մնայ՝ թէ որ ամէն թշնամիներն ալ փախչելով ազատին առ Աստուած դիմեց աղօթքով. Աստուած ալ՝ երկնքէն քարէ կարկուտ մը Թափեց թշնամեաց

վրայ, եւ այն սոսկալի կարկտէն մեռնողները աւելի եղան քան թէ թրով սպանուողները: Բոլոր ցորեկը հալածեցին ու ջարդեցին իսրայէլացիք Ամովրիացիները. արեւը մտնելու վրայ էր, եւ յաղթութիւնը դեռ չէր լմնցած: Յեսուայ հաստատուն հաւատքով վառուած՝ խնդրեց Աստուծմէ որ արեւը կենայ Գաբառնին առջեւը, եւ լուսինը եղունայ ձորոյն առջեւը. — « Կացցէ՛ արեգակն հանդէպ Գաբառնի, եւ լուսին հանդէպ ձորոյն եղունայ »: — Կեցաւ արեւը, եւ այն օրուան ցորեկը ուրիշ օրերէն 12 ժամ աւելի երկնցաւ, մինչեւ որ Յեսուայ եւ իւր զօրքը բոլորովին ջարդեցին փախստական այլազգիներուն մեծ մասը:



Այս պատմութեան մէջ գիտնալու բան է նախ՝  
 Թէ քարէ կարկուտը ի՞նչ էր, եւ երկրորդ Թէ  
 արեւուն կեցածը ի՞նչպէս հասկընալու է: Աս-  
 տուածաշնչին քարէ կարկուտ ըսածը ոմանք  
 այնպէս կհասկընան որ իբր Թէ ըսէր, «Այնպիսի  
 խոշոր ու կարծր կարկուտներ էին եկածներն  
 որ կարծես Թէ քարէ էին»: Բայց ուրիշները ա-  
 ւելի հաւանական մեկնութեամբ կըսեն Թէ Աս-  
 տուած հրաշք գործել կամենալէն ետեւ, իրեն  
 համար՝ քարի պէս կարկուտ կամ քարէ կար-  
 կուտ Թափելը՝ ամէնն ալ մէկ է. եւ Թէ որ քա-  
 րէ կարկուտ գալը խիստ կարգէ դուրս հրաշք  
 երեւի, այս ալ գիտնալու է որ հրաբուրդի ը-  
 սուած կրակ ցատքեցընող լեռներէն արդէն շատ  
 անգամ բիւրաւոր քարեր դուրս կնետուին, որ  
 կրնան սաստիկ քամիով մը Ամովրհացւոց վրայ  
 Թափուած լինել կարկուտի պէս:

Արեւուն կեցածն ալ հրաշք է. բայց ոմանք  
 աչքին այնչափ մեծ կերեւի այս հրաշքն որ  
 կտարակուսին Թէ արդեօք Աստուած այն հրաշքն  
 ալ ըրե՞ր է. ըսել կուզեն Թէ միւր Թէ Աստուած  
 այնպիսի մեծ հրաշք ալ կրնա՞յ ընել. եւ Թէ  
 ըրեր է, արդեօք ի՞նչ կերպով ըրած է որ ի-  
 րենց խելքէն վեր չլինի: — Նոքա կըսեն Թէ Նեւ-  
 տոն աստղաբաշխը կտովրեցընէ մեզի որ երկնային  
 մարմինները ամէնն ալ իրարու հետ այնպիսի  
 կապակցութիւն մը ունին իրենց շարժմունքնե-  
 րուն մէջ որ եթէ անոնցմէ մէկը դադրի, միւս-  
 ներն ալ անպատճառ պէտք է դադրին. արդ-  
 միւր կարելի՞ է հաւատալ, կըսեն, որ Իսրայելա-  
 ցւոց պէս մէկ ամի մը ժողովրդեան համար Աս-  
 տուած բոլոր երկնային մարմնոց կարգը տակն  
 ու վրայ ընէ: Այս ըսող խելացիները չեն իմանար  
 որ ասով զնեւտոնը եւ անոր նման աստղաբաշխ-  
 ները Աստուծմէ վեր դրած կլինին, Աստուծոյ  
 ամենակարողութեանը չափ եւ սահման դրած  
 կլինին աստղաբաշխներուն որոշած կանոնները,  
 եւ Աստուծոյ կամացը խառնուած կլինին Թէ ին-  
 չո՞ւ այս կամ այն ազգին, այս կամ այն մարդուն  
 համար բնութեան օրէնքները պիտի փոխէ. իբր  
 Թէ բնութիւնն ալ Աստուծոյ պէս բան մի է, կամ  
 Աստուած մեծ դժուարութիւն կըաշէ անոր օ-  
 րէնքները փոխելու: Խեղճ մարդիկ. իրենց խել-

ճութենէն կշափեն Աստուծոյ կարողութիւնը:  
 Ո՞վ ըսաւ նոցա Թէ Աստուած չէր կրնար բոլոր  
 երկնային մարմնոց շարժմունքը դադրեցընել  
 քանի մը ժամ՝ եթէ կամենար. կամ Թէ առանց  
 ալ դադրեցընելու այնպէս ընել որ ցորեկուան  
 լոյսը մէկ քանի ժամ աւելի երկարի: — Ասոնց  
 ըրածէն աւելի բնական առարկութիւն է դպրոցի  
 տղայոց ըրած առարկութիւնը Թէ «Մեր Աշխար-  
 հագրութենէն գիտեմք որ պտըտողը երկիրս է,  
 արեւը չէ. ուրեմն ի՞նչպէս կլինի որ Յեսու չը-  
 սեր Թէ Կացցէ՝ երկիր հանդէպ Գաբաւոնի, հա-  
 պա Թէ Կացցէ՝ արեգակն: Ի՞նչ պատասխան կու-  
 տամք այս ըսող աշակերտին. Դնեմք Թէ՝ կըսեմք-  
 Յեսու գիտէր կամ կկամենար այս պատմութիւնը  
 պատմելու ատեն՝ մեզի աստղաբաշխութիւն սով-  
 րեցընել. այն ատենի կարդացողներն որ մտքերը  
 դրած էին Թէ պտըտողը արեւն է, եւ ոչ Թէ եր-  
 կիրս, ի՞նչ պիտի հասկընայինք երբոր կարդայինք  
 կամ լսէին Թէ ըսեր է Յեսու. «Կացցէ՞ երկիր  
 հանդէպ Գաբաւոնի»: — Յայտնի բան է որ ոչ-  
 ինչ: Ապա ուրեմն Յեսու արեւը կեցուց, արեւը  
 Յեսուայ հրամանովը կեցաւ որ կըսեմք, կհասկը-  
 նամք ըստ երեւութիւն, այսինքն մեր աչքին ե-  
 րեւցածին նայելով, ինչպէս որ կըսեմք Թէ արե-  
 ւը ելաւ, արեւը մտաւ, արեւը բարձրացաւ, եւ  
 ոչ Թէ երկիրս ելաւ, երկիրս մտաւ եւ այլն:

Պատերազմին սաստկացած ատենը Ամովրհա-  
 ցւոց հինգ Թագաւորները փախեր ու այրի (*մա-  
 դարայի*) մը մէջ փակուեր պահուրտեր էին: Երբ-  
 որ Յեսու կուզէր զօրքովը Գաղգաղա դառնալ,  
 իմացուցին իրեն. հրաման տուաւ, հանեցին այն  
 հինգ Թագաւորներն ու Յեսուայ առջեւը բերին:  
 Յեսու ուզեց իր զօրավարներուն սիրտ տալ ու  
 յոյսերնին աւելցընել որ այս կերպով պիտի յաղ-  
 թուին իրենց բոլոր Թշնամի ազգերը. ուստի այն  
 Թագաւորները մեռցընէին առաջ հրամայեց զօ-  
 րավարներուն որ իրենց ոտքը նոցա վզերուն  
 վրան դնեն. յետոյ սպաննեց Թագաւորներն ու  
 մարմիննին մէկ մէկ փայտէ կախել տուաւ: Մին-  
 չեւ արեւուն մարը մտնելը այնպէս մնալէն ե-  
 տեւ՝ հրամայեց որ իջեցընեն զանոնք փայտերէն,  
 ձգեց նոյն այրին մէջ՝ ուր որ առաջ պահուրտեր  
 էին ու բերանը մեծամեծ քարերով փակեց:

(Աւարտն յառաջիկայս).